

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ
ՌՈՒՉԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ

Բանալի բառեր – Արցախ, Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Լեռնային Ղարաբաղ, Մինսկի խումբ, արցախյան հակամարտություն, պատերազմ, բանակցություններ, հրադադար, մամուլ, համանախագահներ

2020 թ. սեպտեմբերի 27-ին վերսկսված Արցախյան պատերազմն ի սկզբանե հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Ինչպես որոշ միջազգային կազմակերպություններ, այնպես էլ առանձին պետություններ անմիջապես արձագանքեցին այդ իրադարձություններին: Այդ անդրադարձների վերլուծությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) շահերի, արցախյան հիմնախնդրի կարգավորման ապագայի տեսանկյունից: Առավել ուշագրավ է ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) դիրքորոշումը իրադարձությունների զարգացումների առնչությամբ: Ռուսական քաղաքականության համապատկերում հարկ է առանձնահատուկ ուշադրության արժանացնել պատերազմին և հետագա զարգացումներին առնչվող պետական պաշտոնական մամուլի անդրադարձը:

Դժվար է մեկ հոդվածի շրջանակներում ապահովել համապարփակ ուսումնասիրություն, ամբողջությամբ վերլուծել ռուսական պաշտոնական բոլոր լրատվամիջոցների կամ դրանց մեծ մասի հրապարակումները, սակայն հետևելով պետական քաղաքական և դիվանագիտական կառույցների արձագանքներին՝ ժամանակագրորեն հնարավոր է ձևավորել որոշակի պատկեր ՌԴ արտաքին քաղաքականության առաջնայնությունների վերաբերյալ և տալ համապատասխան գնահատական ՀՀ և Արցախի շահերի տեսանկյունից:

Հետազոտության առաջնային սկզբնաղբյուր են ՌԴ առանձին գերատեսչությունների համացանցային հետևյալ հարթակները.

1. Правительство Российской Федерации // <http://government.ru/>
2. Госновости.рф Официальные новости и публикации государственных органов власти Российской Федерации, государственных учреждений, ведомств, корпораций, компаний и проектов // <https://gov-news.ru/>

3. Председатель Правительства Российской Федерации // <http://premier.gov.ru/events/>

4. Министерство внутренних дел Российской Федерации (МВД России) // <http://mvd.gov.ru>

5. Министерство иностранных дел Российской Федерации (МИД России) // <http://www.mid.ru>

6. Министерство обороны Российской Федерации (Минобороны России) // <http://www.mil.ru>

7. Федеральная служба безопасности Российской Федерации (ФСБ России) // <http://www.fsb.ru>

8. Государственное информационное агентство России // <https://tass.ru/>

9. РИА Новости // <https://ria.ru/>

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան՝ ժամը 7:10 րոպեին, Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղ) դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի վերաբերյալ տեղեկատվությունը ժամեր անց հայտնվեց ռուսական պաշտոնական մամուլում: Մասնավորապես ՌԴ Արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) 10:25 րոպեին տարածեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրավիճակի սրմանն առնչվող կարճ հայտարարություն, որտեղ նշված էր, որ երկու կողմից շփման գծի երկայնքով ընթանում են համառ մարտեր¹:

Այս հայտարարությանը հաջորդեց ՌԴ և ՀՀ Արտաքին գործերի նախարարներ Սերգեյ Լավրովի և Զոհրաբ Մնացականյանի հեռախոսազրույցի մասին տեղեկատվությունը. նրանք քննարկել են իրավիճակը հակամարտության գոտում, և վերջինս իր մտահոգությունն է հայտնել շփման գծում լայնածավալ ռազմական գործողությունների, սպանվածների ու վիրավորների կապակցությամբ: Հայտնում էին նաև, որ Ռուսաստանը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ կշարունակի ձեռնարկել միջնորդական ջանքեր՝ ուղղված իրավիճակի կայունացմանը, ինչպես նաև հեռախոսազրույց է նախապատրաստվում Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հետ²:

Հատկանշական է, որ հաջորդ հեռախոսազրույցը Ս. Լավրովն ունեցել է Թուրքիայի ԱԳ նախարար Մևլութ Չավուշօղլուի հետ³, որին առնչվող տեղեկությունը բավականին չեզոք է և աղքատիկ: Այնուհետև տարածվում է Ջ. Բայրամովի և Ս. Լավրովի հեռախոսազրույցին առնչվող նյութը, որտեղ հայտնում են, որ շփման գծի երկայնքով շարունակվում են գնդակոծու-

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4350914 /26. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4350936 /26. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4350950 /26. 01. 2021/

թյունները, և կարևորվում է հրադարձի անհրաժեշտությունը: Հայտարարությունում կրկին նշվում է, որ Ռուսաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ կշարունակի միջնորդական ջանքերը՝ կայունացնելու իրավիճակը¹:

Սեպտեմբերի 27-ին կայացած այս երեք հեռախոսազրույցների վերաբերյալ համացանցային նյութերից կարող ենք եզրակացնել, որ թեև Հայաստանի հետ ունեցած դաշնակցային հարաբերություններին՝ պաշտոնական Մոսկվան ջանում էր պահպանել չեզոքություն: Դա կարող էր պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ թուրքական կողմն ամեն կերպ փորձում էր ներգրավվել Մինսկի խմբի՝ բանակցային գործընթացում, որը կանխելու նպատակով ռուսական կողմը՝ որպես համանախագահող երկիր, որդեգրել էր չեզոք դիրք:

Սեպտեմբերի 29-ին ՌԴ Ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Գորոլովը և ՌԴ Արտաքին գործերի փոխնախարար Անդրեյ Ռուդենկոն հանդիպում են ունեցել Մոսկվայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տոդանյանի և «Ռուսաստանի հայերի միության» նախագահ Արա Աբրահամյանի հետ: Ինչպես տեղեկանում ենք հաղորդագրությունից, հանդիպման նպատակն էր կանխել Ռուսաստանում ազգամիջյան բախումները²: Այս հանդիպմանը հաջորդեց Ա. Գորոլովի և Ա. Ռուդենկոյի՝ Մոսկվայում Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլիի հետ հանդիպումը, որի առանցքում նույնպես ՌԴ-ում բնակվող հայերի ու ադրբեջանցիների միջև բախումները չեզոքացնելու հարցն էր³:

Սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Էմանուել Մակրոնը Վիլնյուսի համալսարանում ունեցած ելույթում քննադատել է Անկարային նշելով, որ վերջինս «ռազմաշունչ» հռետորաբանությամբ խրախուսում է Լեռնային Ղարաբաղում ծավալված պատերազմական գործողություններին իսլամիստների ներգրավումը⁴:

Հայաստանի և Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարների հետ Ս. Լավրովի՝ սեպտեմբերի 30-ին հեռախոսազրույցների ժամանակ ռուսական կողմը լուրջ անհանգստություն է հայտնում շարունակվող լայնածավալ ռազմական գործողությունների կապակցությամբ: Կոչ է արվում կանխել կրակի դադարեցումը և լիցքաթափել լարվածությունը, զերծ մնալ սադրիչ ու ռազմատենչ հռետորաբանությունից շեշտելով բանակցային սեղանի շուրջ

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4350968 /26. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4361191 /26. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4361201 /26. 01. 2021/

⁴ Տե՛ս <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9603571> // <https://ria.ru/20200930/karabakh-1577984168.html> /26. 01. 2021/

վերադարձի անհրաժեշտությունը¹: Նույն օրը հրապարակվել է ՌԴ ԱԳՆ տեղեկատվության և մամուլի վարչության մեկնաբանությունը՝ մասնավորապես Սիրիայից և Լիբիայից ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով օտարերկրյա վարձկաններ հակամարտության գոտի տեղափոխելու վերաբերյալ²: Թեև ակնհայտ էր, որ այս գործողությունն իրականացվում էր ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ և Թուրքիայի անմիջական մասնակցությամբ, բայց նյութում բացակայում է տեղեկատվություն, թե որ կողմն է այդ արաքի հեղինակը:

Սեպտեմբերի 30-ին ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ է. Մակրոնը հեռախոսազրույց է ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որի պաշտոնական կայքէջը հայտնում է, որ հանգամանալից քննարկվել է իրավիճակի կտրուկ սրումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում: Կողմերը լուրջ մտահոգություն են հայտնել ռազմական լայնածավալ գործողությունների շարունակման կապակցությամբ³: Արձանագրվում էր, որ Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի լուծումը քաղաքական-դիվանագիտական ճանապարհով այլընտրանք չունի: Այս համատեքստում քննարկվել են հետագա համագործակցության կոնկրետ պարամետրեր, առաջին հերթին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով: Կողմերը պատրաստակամություն են հայտնում Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) առաջնորդների անունից համատեղ հայտարարությամբ հանդես գալու վերաբերյալ:

Պատերազմին առնչվող հաջորդ քննարկումը տեղի է ունեցել Ս. Լավրովի և Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն հանձնակատար Ժոզեֆ Բորելի հեռախոսազրույցի ընթացքում⁴: Ընդգծվել է անհապաղ ու ամբողջական հրադադարի, հակամարտության կողմերի և այլ երկրների առավելագույն զսպվածություն դրսևորելու անհրաժեշտությունը:

Ենթադրվում է, որ տվյալ պարագայում նրանք նկատի են ունեցել Թուրքիայի Հանրապետությանը, որը հակամարտության խաղաղ կարգավորման ընթացքում և բանակցային գործընթացում երբևէ դերակատար չի եղել, սակայն այդժամ ակտիվ քայլեր էր ձեռնարկում օժանդակելու թե՛ ռազմական գործողություններին՝ ակնհայտ աջակցություն ցուցաբերելով ադրբեջանական կողմին (չնոռանանք, որ Արցախյան երրորդ պատերազմին նախորդել

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363752 /26. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363834 /26. 01. 2021/

³ Տե՛ս <http://www.kremlin.ru/events/president/news/64122> /26. 01. 2021/

⁴ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4363816 /27. 01. 2021/

էր թուրք-ադրբեջանական համատեղ գորավարժությունը, որից հետո մեծ թվով զինտեխնիկա էր մնացել Ադրբեջանում), թե՛ հույս ունենալով հայտնվել բանակցային սեղանի շուրջ՝ գործընթացն ի նպաստ Ադրբեջանի ավարտին հասցնելու համար:

Հոկտեմբերի 1-ին Վ. Պուտինը, ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը և Է. Մակրոնը հանդես եկան համատեղ հայտարարությամբ¹, որով խստորեն դատապարտեցին հակամարտության շփման գծում բռնության աճը և կոչ արեցին անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները. «Մենք սգում ենք զոհերի համար, ցավակցում ենք զոհվածների և վիրավորների ընտանիքներին: Մենք կոչ ենք անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները մասնակցող կողմերի զինված ուժերի միջև:

Մենք նաև կոչ ենք անում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին անհապաղ պատասխանատվություն ստանձնել բարեխղճորեն և առանց նախապայմանների վերսկսելու բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության աջակցությամբ հակամարտությունը կարգավորելու շուրջ»²: Հրապարակման մեջ նշված է նաև, որ Ս. Լավրովի և Մ. Չավուշովուի հեռախոսազրույցում³ մանրակրկիտ քննարկվել է Լեռնային Ղարաբաղի շուրջ լարվածության աճը: Նախարարները լուրջ մտահոգություն են հայտնել շարունակվող զինված դիմակայության կապակցությամբ և ընդգծել, որ կողմ են ռազմական գործողությունների անհապաղ դադարեցմանը, միաժամանակ անթույլատրելի են համարում հակամարտության մեջ այլ երկրներից ապօրինի զինված կազմավորումների ներգրավումը: Նշված է, որ անհրաժեշտ է խիստ հավասարակշռված քայլեր ձեռնարկել Բաքվին և Երևանին քաղաքական և դիվանագիտական օգնություն ցուցաբերելու համար: Զրույցի ընթացքում ռուսական կողմը կարևորել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձեռնարկած ջանքերը, այդ թվում՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահների 2020 թ. հոկտեմբերի 1-ի համատեղ հայտարարությունը: Պարզ հասկանալով վարձկանների ներգրավման պատճառն ու նրանց գլխավոր դերակատարների գործունեությունը՝ հեռախոսազրույցի մասին հրապարակման մեջ, սակայն, այդ գործընթացը դատապարտող որևէ քննադատություն չկա:

Հատկանշական է, որ նույն օրը ֆրանսիական « Le Monde » պարբերականի լրագրողներն Արցախում ընկել էին Ադրբեջանի կողմից իրականացվող հրետակոծության տակ:

¹ Տե՛ս <http://www.kremlin.ru/events/president/news/64133> // <https://tass.ru/politika/9603031> // https://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4366201 /27. 01. 2021/

² <http://www.kremlin.ru/events/president/news/64133> /27. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4365581 /27. 01. 2021/

Հոկտեմբերի 1-ին ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Ջախարովան իր ճեպագրույցում անդրադարձ է կատարել նաև Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակին¹, նշել, որ խնդիրը, բացի խաղաղ և բանակցային կարգավորման տարբերակից, այլ լուծում չունի: Ռուսական կողմը, ի դեմս Վ. Պուտինի, սեպտեմբերի 27-ին և 29-ին հեռախոսազրույց է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, իսկ Ս. Լավրովը, որը մշտական կապի մեջ է իր հայ և ադրբեջանցի գործընկերների հետ, Ս. Չավուշօղլուի հետ: Ս. Ջախարովայի ճեպագրույցի հաղորդագրության մեջ նաև նշված է, որ հարկ է անհապաղ դադարեցնել արյունահեղությունը, բացառել երրորդ կողմի ցանկացած ռազմատենչ հայտարարություն և գործողություն, որոնք կարող են սրել իրավիճակը, ինչը հղի է Անդրկովկասում իրավիճակի ապակայունացմամբ և կարող է հանգեցնել առավել անկանխատեսելի հետևանքների²: Ինչ վերաբերում է զինյալ ահաբեկիչների տեղափոխման հարցին, Ս. Ջախարովան դիվանագիտորեն այն շրջանցել է³: Երրորդ կողմ ասելով նա նկատի ուներ Թուրքիային, քանի որ չէին դադարում նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանի ռազմատենչ ու սադրիչ հայտարարությունները:

Հատկանշական է, որ Հայաստանին և Ադրբեջանին ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությանն առաջինն արձագանքել է Թուրքիայի նախագահը⁴ նշելով, որ Հայաստանը պետք է դուրս գա գրավյալ տարածքներից, որ Ռուսաստանը, ԱՄՆ-ն ու Ֆրանսիան այս խնդիրն արհամարհել են գրեթե 30 տարի. ըստ Էրդոհանի՝ անընդունելի է, երբ նրանք հրադադարի կոչ են անում: Այսպիսով, փորձ արվեց չեզոքացնել վերջիններիս դերը մինչ այդ տեղի ունեցած բանակցային գործընթացներում:

Հոկտեմբերի 2-ին Ս. Լավրովի և Իրանի Իսլամական Հանրապետության Արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆի միջև կայացած հեռախոսազրույցի ընթացքում մանրամասն քննարկվել է իրավիճակը հակամարտության գոտում: Հաղորդման մեջ նշվում էր. «Երկու կողմերն էլ լուրջ մտահոգություն հայտնեցին շարունակվող լայնածավալ ռազմական գործողությունների, ինչպես նաև Սիրիայից և Լիբիայից անօրինական զինված խմբավորումների զինյալների ներգրավման կապակցությամբ: Կոչ է արվել անհապաղ դադարեցնել բախումները և լարվածությունը լիցքաթա-

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4365684 /27. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4365684#23 /27. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4365684#22 /28. 01. 2021/

⁴ Տե՛ս <https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-turkey-int/turkey-cool-to-u-s-russia-france-ceasefire-effort-in-nagorno-karabakh-idUSKBN26M611?fbclid=IwAR2xvYA43kvtcc0ZapN4ekqEhc9yn9QZwYSXnCP2-1CQ-4PR6Z6Zos7OpwI> // <https://www.rbc.ru/rbcfreenews/5f76c6279a7947e40f75c784> /28. 01. 2021/

փել, ինչպես նաև դադարեցնել սադրիչ և ռազմատենչ հռետորաբանությունը»¹:

Հոկտեմբերի 4-ին Ս. Լավրովի և Ջ. Մնացականյանի միջև կայացած հեռախոսազրույցի ընթացքում ռուսական կողմը մտահոգություն է հայտնել խաղաղ բնակչության շրջանում զոհերի աճի կապակցությամբ, շեշտել անհապաղ զինադադարի անհրաժեշտությունը²:

Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Ժան-Իվ Լե Դրիանի հետ հոկտեմբերի 5-ին Ս. Լավրովի հեռախոսազրույցին վերաբերվող հրապարակման մեջ³ նշված է, որ մանրակրկիտ քննարկվել է իրավիճակը հակամարտության գոտում:

Նույն օրը Ս. Լավրովի և Ջ. Բայրամովի հեռախոսազրույցին առնչվող հաղորդման մեջ ընդգծվում է ռուսական կողմի անհանգստությունը խաղաղ բնակչության շրջանում զոհերի աճի կապակցությամբ: Միաժամանակ վերջինս պատրաստակամություն է հայտնում Մոսկվայում նախաձեռնել Ադրբեյջանի և Հայաստանի Արտաքին գործերի նախարարների հանդիպումը Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ⁴:

Հեռախոսազրույցի վերաբերյալ հաղորդմանը հաջորդում է Ս. Լավրովի, Լե Դրիանի և ԱՄՆ-ի պետքարտուղար Մայքլ Պոմպեոի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հայտարարությունը⁵, որում խստորեն դատապարտվում է հակամարտության գոտում ու դրանից դուրս աննախադեպ և վտանգավոր սրացումը, կոչ է արվում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները՝ հղում անելով միջնորդ երկրների նախագահների հոկտեմբերի 1-ի հայտարարությանը⁶:

Այս հեռախոսազրույցները փաստում են, որ ռուսական կողմը խիստ անհանգստացած է շփման գծի երկայնքում տիրող իրավիճակից և ակտիվորեն մասնակցում է ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման ու բանակցային սեղանի շուրջ վերադառնալու գործընթացներին:

Հոկտեմբերի 8-ին կայացած ձեպազրույցում Ս. Ջախարովան հաղորդել է, որ հոկտեմբերի 11-ից 13-ը Ջ. Մնացականյանը պաշտոնական այցով կմեկնի Մոսկվա: Արտաքին գործերի նախարարներ Ս. Լավրովը և Ջ. Մնա-

¹ https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4366082 /28. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4366277 /29. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4368274 /29. 01. 2021/

⁴ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4368415 /29. 01. 2021/

⁵ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4368439 // <https://gov-news.ru/news/1152356> /29. 01. 2021/

⁶ Տե՛ս <https://gov-news.ru/news/1152356> /29. 01. 2021/

ցականյանը քննարկելու են միջազգային խնդիրներ, տարածաշրջանային անվտանգության հարցեր, Եվրասիական տնտեսական միության, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության, Անկախ պետությունների համագործակցության ձևաչափով փոխգործակցության, երկկողմ բազմապարտֆիլ համագործակցության, ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, Եվրոպայի Խորհրդում, Սնձովյան տնտեսական համագործակցության կազմակերպություններում, այլ միջազգային կառույցներում դիրքորոշումների համակարգման հարցերի լայն շրջանակ և նրանց ուշադրության կենտրոնում կլինի Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու ծայրաստիճան բարդ իրավիճակը¹:

Ս. Զախարովայի՝ Ջ. Մնացականյանի այցի կապակցությամբ արված հայտարարությունում կան մի քանի ուշագրավ կետեր. մասնավորապես՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարը համարվում է «բարձրաստիճան հյուր» (высокий гость): Նույնատիպ բնորոշումներ չեն տրվել այդ օրերին Մոսկվա ժամանող այլ երկրների Արտաքին գործերի նախարարներին: Այդ կերպ կարծես շեշտվում է հայ-ռուսական հարաբերությունների կարևորությունը հատկապես պատերազմական իրավիճակում²: Նշվում է, որ բանակցությունները դաշնակցային բնույթ են կրում, և այդ այցը կխթանի ռուս-հայկական փոխշահավետ գործակցության զարգացմանը ու կնպաստի Անդրկովկասում անվտանգության և կայունության ամրապնդմանը³:

Նշված փաստերի համադրությունը թույլ է տալիս ենթադրել, որ պաշտոնական Մոսկվան քաղաքական ուղերձներ է հղում թուրք-ադրբեջանական կողմին, որ Հայաստանի դեմ ռազմական ոտնձգությունը Ռուսաստանի տարածաշրջանային շահերի դեմ է:

Հոկտեմբերի 9-ին Մոսկվայում Ս. Լավրովի, Ջ. Մնացականյանի և Ջ. Բայրամովի միջև տասնմեկ ժամ տևած բանակցությունների արդյունքում ձեռք բերված մարդասիրական հրադադարի մասին պայմանավորվածության հայտարարության⁴ առաջին կետի համաձայն՝ 2020 թ. հոկտեմբերի 10-ին ժամը 12:00-ից մարդասիրական նպատակներով պետք է տեղի ունենար կրակի դադարեցում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ և նրա չափանիշներին համապատասխան ռազմագերիների, այլ պահվող անձանց և զոհերի մարմինների փոխանակման նպատակով: Հրադադարի

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4373061 /29. 01. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4373061#4 /29. 01. 2021/

³ Տե՛ս նույն տեղում /29. 01. 2021/

⁴ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4377041 /29. 01. 2021/

ռեժիմի հստակ չափորոշիչները նախատեսված էին համաձայնեցնել լրացուցիչ:

Հայտարարության երրորդ և չորրորդ կետերը վերաբերում էին հրադարի հաստատումից հետո արցախյան հակամարտության կարգավորման նպատակով բանակցային գործընթացի վերսկսմանը: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ Հայաստանն ու Ադրբեջանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ կարգավորման հիմնարար սկզբունքների հիման վրա պետք է ձեռնամուխ լինեին բովանդակային բանակցությունների՝ խաղաղ կարգավորմանը շուտափույթ հասնելու նպատակով: Կողմերը նաև հաստատում էին բանակցային գործընթացի ձևաչափի անփոփոխելիությունը:

Այս վերջին՝ չորրորդ կետը կարելի է համարել հայկական և ռուսական կողմերի դիվանագիտական հաջողություն, քանի որ, ինչպես հայտնի է, վերջին տարիներին և հատկապես պատերազմի սկզբում թուրք-ադրբեջանական տանդեմը ամեն ինչ անում էր Թուրքիային ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների կազմում ընդգրկելու համար:

Հոկտեմբերի 11-ին թուրքական կողմի նախաձեռնությամբ Ս. Լավրովի և Մ. Չավուշօղլուի միջև տեղի ունեցած հեռախոսազրույցի մասին հաղորդումից¹ կարող ենք ենթադրել, որ հոկտեմբերի 9-ից 10-ը Մոսկվայում կայացած եռակողմ բանակցությունների արդյունքները թուրքական կողմի համար եղել են մտահոգիչ:

Հոկտեմբերի 12-ին ՀՀ և ՌԴ Արտաքին գործերի նախարարների բանակցություններից հետո հրավիրված մամլո ասուլիսում² Չ. Մնացականյանը հերթական անգամ շեշտել է. «Գոյություն ունի էրզիստենցիալ վտանգ, որի մասին մենք խոսում ենք տասնամյակներ շարունակ, որին Արցախի բնակչությունն այսօր առնչվում է: Սա բացասական գործոն է, որում ներգրավված են Թուրքիան և Միբիայից ու Լիբիայից ահաբեկիչներ: Դա ապացուցվել է ոչ միայն մեր սկզբնաղբյուրների կողմից, այլև արձանագրվել է և հայտարարվել համաշխարհային հանրության կողմից: Ռուսաստանի դերակատարումն այս գործում շատ կարևոր է»³:

Երկու նախարարները շեշտել են հրադարարի մասին հոկտեմբերի 9-ից 10-ի պայմանավորվածության անշեղ կատարման անհրաժեշտությունը: Նրանք քննարկել են նաև հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների օրակարգին առնչվող մի շարք հարցեր: Չ. Մնացականյանի դիտարկմամբ՝ «հայ-ռուսական հարաբերությունները չեն սահմանափակվում բարձրաստիճան այցերով և հանդիպումներով, այլև ընդգրկում են ուղիղ

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4377255 /31. 01. 2021/

² Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=xYrfEq0czTk> /31. 01. 2021/

³ Նույն տեղում /31. 01. 2021/

շփումներ, որոնք այս իրավիճակում խիստ կարևոր են»¹: Առանձնահատուկ է նաև այն, որ ասուլիսի ընթացքում անդրադարձ կատարվեց մշակութային և հումանիտար համագործակցությանը, մասնավորապես՝ ՀՀ-ում ռուսաց լեզվի ուսուցման կարևորությանը, ինչպես նաև երկու երկրների բուհերում ուսանողների կրթությանը և հատկացված տեղերի թվին: Չ. Մնացակայնանը շեշտեց, որ Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսական հիմնական գործընկերը²:

Նույն օրը Ա. Ռուդենկոն Մոսկվայում ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Էնդրյու Շեֆերի և Լեոնային Ղարաբաղում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրչիկի հետ հանդիպման³ ընթացքում քննարկել է իրավիճակը հակամարտության գոտում, ինչպես նաև հոկտեմբերի 10-ին երեք երկրների Արտաքին գործերի նախարարների հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարմանն ուղղված հնարավոր քայլերը:

ՌԴ ԱԳՆ կայքում տեղադրված՝ 2020 թ. հոկտեմբերի 10-ի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների Ժնև-Մոսկվա հայտարարությունը⁴ չեզոք և խիստ դիվանագիտական անդրադարձ է հակամարտության գոտում տիրող իրավիճակին: Կրկին կոչ է արվում կրակը դադարեցնել և կատարել հոկտեմբերի 10-ի համաձայնությամբ ձեռք բերված պարտավորությունները. «Համանախագահները կողմերին կոչ են անում անհապաղ հումանիտար հրադադար հաստատել՝ ռազմագերիների և կալանավորվածների, ինչպես նաև սպանվածների աճյունների վերադարձն ապահովելու համար, և կողմերին հորդորում են անհապաղ համաձայնության գալ հրադադարի ռեժիմի մեխանիզմի առնչությամբ»⁵:

Առանձնահատուկ կարևորություն ունի Չ. Մնացականյանի՝ ՌԴ կատարած պաշտոնական այցի մասին հրապարակումը⁶, որտեղ շեշտվում է.

1. Չ. Մնացականյանի այցը ՌԴ եղել է Մ. Լավրովի հրավերով. հիշենք, որ Ադրբեջանի ԱԳՆ-ն նման պատվի չի արժանացել:

2. Շեշտվում է, որ Չ. Մնացականյանին ընդունել է Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշևը:

¹ https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4378166 /31. 01. 2021/

² Տե՛ս նույն տեղում /31. 01. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4378156 /02. 02. 2021/

⁴ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4380609 /02. 02. 2021/

⁵ Նույն տեղում /02. 02. 2021/

⁶ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4380619 /02. 02. 2021/

3. Այցն «Անհայտ զինվորի» հուշահամալիրի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին գոհված խորհրդային զինվորների հիշատակին երկու երկրների ամուր և երկարատև բարեկամության ցուցիչ է:

4. Շեշտադրումը, որ «բանակցություններն անցել են ռուս-հայկական հարաբերություններին բնորոշ կառուցողական և վստահելի մթնոլորտում և նպաստել մեր երկրների և ժողովուրդների միջև դաշնակցային փոխգործակցության և ավանդական բարեկամության ամրապնդմանը»¹, յուրահատուկ ակնարկ է թուրք-ադրբեջանական կողմին:

Ի տարբերություն վերոնշյալ հանդիպման՝ ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ հոկտեմբերի 14-ին կայացել է Ս. Լավրովի հեռախոսազրույցը Ջ. Բայրամովի հետ, որի ընթացքում քննարկվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ստեղծված բարդ իրադրությունը: ՌԴ ԱԳՆ պաշտոնական կայքում նշված է. «Ռուսական կողմն ընդգծեց, որ հրադադարի ռեժիմի պահպանումը դիտարկելու մեխանիզմի անհապաղ համաձայնեցումն այլընտրանք չունի, որը հիմք կստեղծի Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական-դիվանագիտական կարգավորմանն ուղղված հետագա քայլերի համար»²:

ՌԴ ԱԳՆ պաշտոնական կայքում տեղադրված Ս. Լավրովի՝ հոկտեմբերի 14-ին «Спутник», «Комсомольская правда» և «Говорит Москва» ռադիոկայաններին տված հարցազրույցի վերաբերյալ ծավալուն հրապարակման մեջ անդրադարձ է կատարվում Արցախում տեղի ունեցող պատերազմին, իր միջնորդությամբ կայացած հայ-ադրբեջանական բանակցություններին և Թուրքիայի դերին³: Տեղեկանում ենք, որ տասնմեկ ժամ տևած մարդասիրական հրադադարի շուրջ բանակցությունների ընթացքում Վ. Պուտինը գանգահարել է ՀՀ և Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարներին և զրուցել նրանց հետ:

Արցախում խաղաղապահներ տեղակայելու հնարավորությանն անդրադառնալով՝ Ս. Լավրովը նշել է, որ կողմ է այդ գաղափարին: Նրա կարծիքով՝ ճիշտ կլինեք, եթե ռուսական ռազմական դիտորդներ տեղակայվեին, սակայն նշել է, որ վերջնական որոշումը պետք է կայացնեն հակամարտող կողմերը:

Լրագրողներից մեկի այն հարցին, թե ինչպես է Թուրքիան հակամարտության գոտում հանդես գալիս թե՛ իբրև Ռուսաստանի դաշնակից և թե՛ նրա հակառակորդ, Ս. Լավրովը պատասխանել է, որ Ռուսաստանը երբեք Թուրքիային չի դիտարկել որպես ռազմավարական գործընկեր, ուստի և հա-

¹ Նույն տեղում /02. 02. 2021/

² https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4381067 /02. 02. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4381977 /08. 02. 2021/

մաձայն չէ այն դիրքորոշման հետ, որը վերջինս հնչեցրել է ԼՂ հակամարտության հարցում: Հիշեցնենք, որ Ռուսաստանը ընդունելի էր համարում խնդրի բանակցային կարգավորման ուղին, իսկ Թուրքիան՝ Ադրբեջանին աջակցելու ուղին՝ թե՛ ռազմական և թե՛ խաղաղ կարգավորման պարագայում:

Այսպիսով կարող ենք փաստել, որ հարցազրույցի ընթացքում Ս. Լավրովն ավելի շատ մատնանշում է Ռուսաստանի և Թուրքիայի հակադարձ դիրքորոշումները հակամարտության և արտաքին քաղաքականության տիրույթում, քան նրանց ունեցած «դաշնակցային» հարաբերությունները: Այն, որ ՌԴ նախագահը բանակցությունների ընթացքում երկու հեռախոսազրույց է ունեցել հակամարտող երկրների Արտաքին գործերի նախարարների հետ, վկայում է բանակցային գործընթացի բարդ և հակասական ընթացքի մասին:

Հոկտեմբերի 15-ին Ս. Լավրովի՝ Մ. Չավուշօղլուի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում *բարձր մակարդակով* քննարկվել է իրավիճակը Լեռնային Ղարաբաղի շուրջ¹:

Հատկանշական է, որ այդ օրը Մ. Չախարովայի ճեպագրույցի ժամանակ² լրագրողը հարցրել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Մոսկվայի դիրքորոշման մասին՝ հիշեցնելով, որ նախորդ օրը ժողովրդին ուղղված ուղերձում Ն. Փաշինյանը նշել է, որ կառավարությունը հրաժարվում է դարաբաղյան հակամարտության հետագա բանակցություններից՝ առանց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման³: Մ. Չախարովայի կարծիքով՝ դա կարող էր այդ օրերին երկու երկրների ղեկավարների հնչեցրած հուզական հայտարարություններից լինել⁴:

Հոկտեմբերի 17-ին Չ. Մնացականյանի և Չ. Բայրամովի հետ Ս. Լավրովի ունեցած հեռախոսազրույցների ընթացքում⁵, ՌԴ ԱԳՆ մամուլի վարչության փոխանցմամբ, քննարկվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ստեղծված իրավիճակը:

Արցախյան հակամարտությանն անդրադարձ է կատարվել նաև Ս. Լավրովի և Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ-Բուրիչի հետ բանակցություններից հետո: Հոկտեմբերի 19-ին վերջինների հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, Ս. Լավրովը նշել է, որ ինքը

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4390909 /08. 02. 2021/

² Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4390936 /08. 02. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4390936#20 /08. 02. 2021/

⁴ Տե՛ս նույն տեղում /08. 02. 2021/

⁵ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4392654 /10. 02. 2021/

Եվրոպայի խորհրդի իր գործընկերներին իրազեկել է Ղարաբաղում տիրող իրավիճակի շուրջ Ռուսաստանի տեսլականի և այդ ուղղությամբ արված քայլերի մասին¹: Նա նաև ասել է, որ անհրաժեշտ է վերջ տալ Լեռնային Ղարաբաղում առճակատում մղող հռետորաբանությանն ու մարտական գործողություններին՝ հղում կատարելով հոկտեմբերի 10-ին երեք երկրների՝ համատեղ հայտարարությանը մարդասիրական հրադադարի վերաբերյալ շեշտելով, որ կողմերը պայմանավորվել էին հոկտեմբերի 18-ին դադարեցնել արյունահեղությունը:

Ըստ Ս. Լավրովի՝ «պետք է կողմերին համոզել համաձայնության հանգել առանցքային դրույթների շուրջ, որոնք թույլ կտան ավելի երկարաժամկետ հեռանկարում կայունացնել իրադրությունը տարածաշրջանում, բացել տնտեսական, տրանսպորտային հանգույցները և ապահովել Ղարաբաղի և այնտեղ գտնվող մյուս տարածքների հուսալիությունն ու անվտանգությունը»²:

Այսպիսով, Մոսկվան տեսնում էր խնդրի կարգավորման այն տարբերակը, որը պետք է հանգեցնե՛ր հակամարտող երկու երկրների միջև անվտանգային և տնտեսական կայուն հարաբերությունների հաստատմանը՝ ուրվագծելով դրան տանող ճանապարհը: ՌԴ ԱԳՆ պաշտոնական կայքի հրապարակման մեջ նշված է, որ հոկտեմբերի 20-ին և 21-ին Մոսկվայում Ս. Լավրովն առանձին հանդիպումներ է ունեցել Ջ. Բայրամովի և Ջ. Մնացականյանի հետ³: Բանակցությունների մասին մամուլում նախապես անդրադարձ չի եղել և հակամարտող երկրներում նախարարների՝ Մոսկվա մեկնելու մասին տեղեկությունն ավելի ուշ է տարածվել: Այստեղ նկատելի է ևս մեկ մտավախություն. հակամարտության լուծման ձգձգումը կարող էր հանգեցնել ոչ միայն Թուրքիայի ակտիվությանը Մինսկի խմբի կազմում հայտնվելու առումով, այլև ԱՄՆ-ի դերակատարության ուժեղացմանն ու ակտիվացմանը: Ռուսաստանն ինչպես միշտ ձգտել է թե՛ բանակցային և թե՛ ռազմական պայմաններում իրավիճակը պահել իր վերահսկողության ներքո՝ ցույց տալու համար, որ խնդիրն արտաքին քաղաքականության տիրույթում է:

Հոկտեմբերի 26-ին «Աթենքի Մակեդոնական լրատվական գործակալությանը» տված հարցազրույցում Ս. Լավրովը նշել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ Թուրքիայի ներգրավվածությունն ունի իր նրբությունները՝ մեկ անգամ ևս ակնարկելով, որ Թուրքիան կողմ է խնդրի կարգավորման ռազմական ուղուն: Սակայն Ռուսաստանը, հայերին և ադրբեջանցիներին համարելով բարեկամ և եղբայրական ժողովուրդներ, չի կարող

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4395296 /10. 02. 2021/

² <https://www.youtube.com/watch?v=J7gAvtoWnXk> /10. 02. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4398257 /10. 02. 2021/

կիսել նման դիրքորոշումը: Եվս մեկ անգամ հիշատակելով ԵԱՀԿ Մինսկի համանախագահների «եռյակը»՝ Մ. Լավրովը փաստում է, որ այն երկարատև հակամարտությանը վերջ տալու առումով միջնորդական ընդհանուր ճանաչում ստացած ձևաչափ է: Մա կարծես ևս մեկ ակնարկ էր՝ ուղղված բանակցային սեղանի շուրջ Թուրքիայի հայտնվելու անընդունելի ձգտումներին:

Մ. Լավրովը Մ. Չավուշօղլուի հետ հոկտեմբերի 27-ին կայացած հեռախոսազրույցի ժամանակ քննարկել է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը¹, ընդգծելով օտարերկրյա զինյալների ներգրավման անթույլատրելիությունը: Գնահատելի է Ռուսաստանի դերակատարությունն այն առումով, որ Թուրքիան ցայսօր չի ներգրավվել արցախյան հիմնահարցի կարգավորման գործընթացում: Այս հեռախոսազրույցից կարող ենք առանձնացնել այն, որ ռուսական կողմի պնդմամբ՝ ինդիքը պետք է լուծվի միայն խաղաղ կարգավորման ճանապարհով, և օտարերկրյա զինյալները պետք է դուրս բերվեն ռազմական գործողությունների գոտուց:

Մ. Զախարովան հոկտեմբերի 29-ի ճեպագրույցում Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակի վերաբերյալ նշել է. «ՌԴ-ն խորապես մտահոգված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ռազմական բախումներում Մերձավոր Արևելքից բերվող օտարերկրացի վարձկանների ավելի ու ավելի մասշտաբային ներգրավմամբ»²: Անդրադառնալով հոկտեմբերի 29-ին Մինսկի խմբի համանախագահների և Հայաստանի ու Ադրբեյջանի Արտաքին գործերի նախարարների մասնակցությամբ Ժնևում կայանալիք հանդիպմանը³, նա ցավով փաստել է, որ հոկտեմբերի 23-ին Վաշինգտոնում ԱՄՆ-ի Պետական քարտուղար Մ. Պոմպեյի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպումը ևս եղել է անարդյունք: Նրա հավաստմամբ՝ Մոսկվան շարունակում է եռանդուն ջանքեր գործադրել թե՛ որպես ազգային միավոր և թե՛ ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմում բանակցային գործընթացը վերսկսելու և դարաբաղյան հակամարտության շուտափույթ ապաստանալիցայի հասնելու համար⁴: Մտահոգություն հայտնելով մարտերում Մերձավոր Արևելքից օտարերկրյա վարձկանների ավելի ու ավելի ընդգրկուն ներգրավմամբ՝ Մ. Զախարովան նշել է, որ աճել են ծախսերը հակամարտող կողմերի տնտեսությունների և հասարակությունների համար:

Հոկտեմբերի 31-ին Ն. Փաշինյանի կողմից Վ. Պուտինին ուղղված՝

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4409335 /10. 02. 2021/

² https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4411063 / <https://www.youtube.com/watch?v=3b3VXh1ni3U> /10. 02. 2021/

³ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4411063#4 /10. 02. 2021/

⁴ Տե՛ս նույն տեղում /12. 02. 2021/

Հայաստանին աջակցելու նպատակով անհապաղ խորհրդակցություններ սկսելու խնդրանքով դիմումին ի պատասխան՝ ՌԴ ԱԳՆ կայքում տեղադրված հայտարարությունում նշված է, որ հիմք ընդունելով Հայաստանի և Ռուսաստանի միջև դաշնակցային հարաբերությունները՝ 1997 թ. օգոստոսի 29-ի «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ աջակցության մասին» պայմանագրի մի շարք հոդվածներ ենթադրում են հատուկ գործողություններ միմյանց տարածքի նկատմամբ զինված հարձակման կամ ագրեսիայի ակտի սպառնալիքի դեպքում¹: Բնական է, որ սա նախագուշական բնույթ էր կրում՝ Ադրբեջանին, Թուրքիային և միջազգային հանրությանը հիշեցնելու երկու երկրների միջև ռազմավարական դաշինքի և սպառնալիքի դեպքում դրանից բխող պարտավորությունների կատարման վերաբերյալ:

Նոյեմբերի 3-ին «Կոմերսանտ» թերթին տված հարցազրույցում Ս. Լավրովը նշում է. «Մենք իհարկե մտահոգված ենք Ղարաբաղյան հակամարտության միջազգայնացմամբ և Մերձավոր Արևելքից զինյալների ներգրավմամբ: Մենք բազմիցս կոչ ենք արել արտաքին խաղացողներին օգտագործել իրենց հնարավորությունները՝ ճնշելու վարձկանների տեղափոխումը, որոնք գտնվում են հակամարտության գոտում: Ըստ առկա տվյալների՝ այն արդեն մոտենում է երկու հազարի: Այս թեման մասնավորապես բարձրացրել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հոկտեմբերի 27-ին՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանի հետ հեռախոսազրույցի ժամանակ, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների հետ կանոնավոր շփումներից հետո»²:

Փաստորեն պաշտոնական Մոսկվան, չնայած իր նուրբ և դիվանագիտական արտաքին քաղաքականությանը, առաջին անգամ վարձկանների տեղափոխման հարցում մատնանշում է Թուրքիային³, բայց միաժամանակ դա կատարում է դիվանագիտորեն՝ հաշվի առնելով տարածաշրջանային փոխգործակցային շահերը:

Նոյեմբերի 5-ին տեղի ունեցած ձեպազրույցի ժամանակ Ս. Զախարովան մտահոգություն է հայտնել Անդրկովկասում ահաբեկչական նոր անկլավի ձևավորման կապակցությամբ⁴, շեշտելով, որ Ռուսաստանը միջազգային ահաբեկչության դեմ պայքարի առաջամարտիկներից է:

¹ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4411939 /12. 02. 2021/

² https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4414491 /12. 02. 2021/

³ Տե՛ս <https://tass.ru/politika/9926411?fbclid=IwAR1VmNHfbhNNh0gjc3narzo5b0xo5eoadB6UTjgz7di6tWtHj4dhC-jpcjo> /12. 02. 2021/

⁴ Տե՛ս https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4415404 /12. 02. 2021/

Նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Ադրբեջանի նախագահի, ՀՀ վարչապետի և Ռուսաստանի նախագահի հայտարարության վերաբերյալ հրապարակումների հանդիպում ենք և՛ ՌԴ նախագահի, և՛ ՌԴ ԱԳՆ¹ կայքերում²: Զինադադարի մասին այս հայտարարությունը «համարվում է» ռուսական դիվանագիտության հաղթանակը: Չնայած հայկական կողմի համար անդառնալի ու մեծ կորուստներին՝ ՌԴ-ն կարողացավ ճիշտ դիվանագիտության և համառ ջանքերի շնորհիվ մնալ հարցի թե՛ խաղաղ և թե՛ ռազմական պայմաններում կարգավորման առաջամարտիկն ու ամենամեծ դերակատարը:

Այսպիսով.

1. ՌԴ-ն եղել և պահպանում է հիմնախնդրի կարգավորման գլխավոր դերակատարի գործառույթները: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 23-ին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը բաց նամակով դիմել էր Վ. Պուտինին՝ մեկ անգամ ևս շեշտելով, որ հայկական կողմը կարգավորումը տեսնում է ռուսական կողմի միջամտությամբ: Ցավալի է, որ այս նամակը փաստում է Հայաստանի քաղաքական ղեկավարության անկարողությունը խնդրի խաղաղ կարգավորման հարցում:

2. Կրակի դադարեցման հիմքում դրված «Լավրովյան պլան»-ն ի կատար ածվեց:

3. Ռուսական կողմը, խաղաղարար դերից բացի, իր խաղաղապահներին տեղակայելու հնարավորություն ստացավ: Ինչպես գիտենք՝ ռուսական խաղաղապահների տեղակայմանը դեմ էր թուրք-ադրբեջանական կողմը:

4. Ռուսաստանը շարունակեց իր ազդեցության պահպանումը տարածաշրջանում՝ որպես հետխորհրդային գերտերություն:

5. Ռուսաստանը բացառեց տարածաշրջանում այլ «մրցակից» ուժի խաղաղապահական առաքելության ներկայությունը:

6. Հատկանշական է, որ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ հրադադարի հաստատման վերաբերյալ ռուսական պաշտոնական մամուլում ծանրակշիռ գնահատականներ չեն տրվել՝ այսպիսով երկրորդելով ԱՄՆ-ի դերակատարությունը կարգավորման գործընթացի վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից:

7. Չկարգավորված մնաց արցախյան հիմնահարցը՝ կրկին ռուսական ազդեցությունից կախման մեջ պահելով թե՛ Արցախը, թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ արցախյան հիմնահարցն ու դրա խաղաղ կարգավորումը եղել են Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում:

¹ Տե՛ս https://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4419267 /12. 02. 2021/

² Տե՛ս <http://kremlin.ru/events/president/news/64384> /13. 02. 2021/

Ալիկ Ղարիբյան, Ռուզաննա Գասպարյան – Արցախյան 44-օրյա պատերազմի վերաբերյալ ռուսական պաշտոնական արձագանքները

2020 թ. սեպտեմբերի 27-ին վերսկսված Արցախյան պատերազմն ի սկզբանե գտնվում էր միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղ) դեմ սանձազերծված պատերազմի վերաբերյալ տեղեկատվությունը ժամեր անց հայտնվեց ռուսական պաշտոնական մամուլում: Սեպտեմբերի 30-ին Հայաստանի և Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարների հետ Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի հեռախոսազրույցների համատեքստում ռուսական կողմը լուրջ անհանգստություն է հայտնում շարունակվող լայնածավալ ռազմական գործողությունների կապակցությամբ: Գնահատելի է Ռուսաստանի դերակատարությունն այն առումով, որ Թուրքիան ցայսօր վճռական դերակատարությամբ չի ներգրավվել արցախյան հիմնահարցի կարգավորման գործընթացում: Նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Ադրբեջանի նախագահի, ՀՀ վարչապետի և Ռուսաստանի նախագահի ստորագրած հայտարարության վերաբերյալ հրապարակումներ առկա են և՛ Վ. Պուտինի և՛ Ս. Լավրովի կայքերում: Արցախյան հիմնահարցն ու դրա խաղաղ կարգավորումը եղել է և ամենայն հավանականությամբ դեռ երկար կմնա Ռուսաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Հատկանշական է, որ ռուսական (Կ. Կալլե) և արևմտյան (Ջ. Ջ. Կոիլ) հետազոտողներն արդեն իսկ իրենց աշխատություններում անդրադարձել են 2020 թ. 44-օրյա պատերազմին, որոնց մի մասը հարցի աշխարհաքաղաքական, դիվանագիտական և ռազմաքաղաքական տեսանկյունից յուրօրինակ հետաքրքրություն է ներկայացնում:

Алик Гарибян, Рузанна Гаспарян – Российская официальная реакция на 44-дневную арцахскую войну

Ключевые слова – В. В. Путин, С. В. Лавров, Россия, Армения, арцахский вопрос, президент, министр иностранных дел, российская сторона, широкомасштабные военные действия

Арцахская война, возобновленная 27 сентября 2020 г., с самого начала находилась в центре внимания международной общественности, а спустя несколько часов была освещена на страницах официальной российской прессы. В контексте телефонных разговоров, состоявшихся 30 сентября между министрами иностранных дел Армении и Азербайджана и министром иностранных дел РФ С. В. Лавровым, российская сторона выразила глубокую обеспокоенность в связи с продолжающимися широкомасштабными военными действиями. Очень ценна роль России в аспекте того, что Турция до сих пор решительным образом не вовлечена в процесс урегулирования арцахского вопроса. Публикации о заявлении, подписанном премьер-министром РА, президентом Азербайджана и президентом РФ в ночь с 9 на 10 ноября, размещены на сайтах В. В. Путина и С. В. Лаврова. Арцахский вопрос и его мирное урегулирование были и, скорей всего, еще долго будут на повестке дня внешней политики России. Примечательно, что российские (К. Калле) и западные (Дж. Дж. Коил) исследователи уже затронули в своих публикациях 44-дневную войну 2020 г., часть этих публикаций представляет особый интерес в геополитическом, дипломатическом и военно-политическом аспектах.

Alik Gharibyan, Ruzanna Gasparyan – *Russia's Official Response to the 44-Day Artsakh War*

Key Words – V. V. Putin, S. V. Lavrov, Russia, Armenia, Artsakh, president, international community, concern, role, foreign policy, point of view

The 2020 Artsakh war, which resumed on September 27, initially caught the attention of the international community, and hours later it appeared in the official press of Russia. On September 30, the Minister of Foreign Affairs of the Russian Federation S. V. Lavrov had telephone conversations with the Ministers of Foreign Affairs of Armenia and Azerbaijan, in the context of which the Russian side expressed serious concern over the ongoing large-scale hostilities. Russia played a commendable role in the sense that Turkey has not played a decisive role in the settlement of the Nagorno-Karabakh conflict to this day. The publications on the ceasefire agreement signed between the Prime Minister of the Republic of Armenia, the President of Azerbaijan and the President of Russia on the night of November 9-10 are available on V. V. Putin's, as well as S. V. Lavrov's websites. The Artsakh issue and its peaceful settlement have been and, in all probability, will remain on the agenda of Russia's foreign policy for a long time. It is noteworthy that Russian (K. Kalle) and Western (J. J. Coil) researchers have already referred to the 2020 44-day war in their publications, some of which are of special interest from the geopolitical, diplomatic and political-military point of view.

Ներկայացվել է 31.05.2021

Գրախոսվել է 21.06.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021